« Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ավարտական հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավավորումը Պատմության դասավանդման ընթացքում »

Առարկան՝ Հայոց պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարտիրոսյան Կարինե

Ուսումնական հաստատություն՝ Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոց

Երևան 2023

Ներածություն

Արժեքները պարզապես բառեր չեն, արժեքներն այն են, ինչի համար մենք ապրում ենք։ Դրանք են այն պատճառները, որոնք մենք պաշտպանում ենք և հանուն որոնց ժողովուրդը պայքարում է։

Ջ.Քերրի

Մարդկության գոյության ողջ ժամանակահատվածը դա արժեքների ձևավորման, հաստատման, զարգացման և փոփխության գործընթաց է։Արժեքը – յուրահատուկ ընկալում է, որը ձևավավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա։ Մանկավարժական գիտության մեջ «արժեհամակարգ» հասկացությունը ընկալվում է բավական լայն շառավիղով։ Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար։ Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում։

Այսօր ժամանակակից աշխարհում հաշվի առնելով շատ հանգամանքների ազդեցությունը, խնդիր է դառնում ձևավորել անհատին՝ քաջածանոթ լինել իր ազգի պատմությանը ու արմատներին, հպարտ լինել ազգային պատկանելությամբ, իմանալ և կրել քրիստոնեական և ազգային բարոյական արժեքները և չանտեսել համամարդկային արժեքները։

Հովհաննես Թումանյանը գրում է. «Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»։ Անդրադառնալով ազգային և հոգևոր արժեհամակարգի ձևավորմանը դպրոցում՝ կարևոր է վերհանել ուսուցանվող նյութի հիմքում դրված նպատակն ու խնդիրները.

Հետազոտության նպատակը

Սովորողն իմանալով ազգային արժեքների կարևորությունը՝ կարողանում է ճիշտ գնահատել դրանք, հիմնավորել սեփական տեսակետը և դրսևորել սեր ու հարգանք ազգային արժեքների հանդեպ: Սեփական արժեքների շուրջ համախմբվածությունը տվյալ ազգի հոգու զորության և ներքին ամրության գրավականն է:

Հետազոտության խնդիրները.

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա.

Ուսուցման մեթոդներ, հնարներ

Ելնելով հետազոտության մեջ առաջադրված խնդիրներից՝ կարելի է կիրառել հետևյալ մեթոդները. Կերպարային քարտ՝ սա հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները «ներսից»՝ տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները: Կերպարային քարտը կարող է կիրառվել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցադրումների քննարկման համար: Ինչպես նաև զրույց, մտագրոհ, հարց ու պատասխան, երկխոսություն, ցուցադրական, գործնական, ինքնուրույն աշխատանք (m-աձև աղյուսակ) խմբային աշխատանք ուսումնական նոր նյութի հետ, սաիկահանդես:

Նյութի հիմքում հստակ դրված նպատակի ու խնդիրների, ինչպես նաև, կիրառված մեթոդական հնարների ու միջոցների շնորհիվ աշխատանքն ունենում է դրական և հաջողված արդյունք:

Արժեքային համակարգը

Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում համարվում են ամենահիմնարարը:

Հայոց պատմություն առարկան միշտ իր կարևոր ներդրումն է ունեցել հայ մանուկների ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործընթացում: Դարեր շարունակ մեր պատմիչների աշխատություններն օգտագործվել են որպես դասագիրք և ազգային, հայրենասիրական ոգով դաստիարակել բազում սերունդներ: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է պատմության դասընթացում: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացման, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝

մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ:

Արժեքը նորմատիվային համակարգ է, որը գործունեության ձևի ընտրության ուղեցույց է, այն սահմանում է նպատակները, ապահովում դրանց հասնելու միջոցները: Գիտնականների կողմից արժեքները դասակարգվել են ՝ 1.Ճանաչողական 2.Սոցիալական 3.Քաղաքական 4.Կրոնական 5.Գեղագիտական 6. Տնտեսական խմբերի:

Երեխան, նախ և առաջ, մեծանում է ընտանիքում, առաջին անգամ տեսնում ծնողների վարվելաձևը, զգում նրանց արժեհամակարգը: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Դպրոցում տրվում են գիտելիքներ, որոնք որևէ կապ չունեն հոգևոր-զգացական ոլորտի հետ, հոգևոր նկարագիր կերտելու հետ, այլ վերաբերում են միայն մտքին, բերում գիտելիքներ և իմաստություն: Իսկ այստեղ կարևոր է ուսուցչի կերպարը, որովհետև ուսուցիչը, հատկապես, երեխայի համար օրինակման իդեալական կերպար լինելու աղբյուր է և իր օրինակով կարող է դաստիարակել երեխաներին, նրանցում ամրացնել հոգևոր – բարոյական արժեքներ, կերտել աստվածահաճո դիմագիծ: Երեխայի մեջ ամուր դրված հիմքը հետագայում անսասան է մնում շրջապատի կողմից: Ուստի ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկը երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմազանության մեջ:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով:

Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:

- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծմանգործում իր մասնակցության անհրաժեշտությունը
- Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

Մեզանից յուրաքանչյուրն ունի կարևորագույն տարբեր աստիճաններով բազմաթիվ արժեքներ։ Արժեքները ձևավավորում են որոշակի սահմաններ ու մարդկային վարքի նորմեր։ Իրականացնում են նպատակների ու դրդապատճառների ձևավավորման գործառույթներ, պայմանավորում վարքի նախընտրելիությունը՝ ապահովելով իրականության նկատմամբ ընտրական վերաբերմունք։ Արժեքները հասարակության կողմից ընդունված ցանկալիի մասին պատկերացումներն են։ Այն յուրահատուկ ընկալում է, որը ձևավավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի ու ինֆորմացիայի, այլ սեփական կեսափորձի հիման վրա։ Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաները հավատն ու սերն են։

Բարոյական արժեք ասելով հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, ուսուցումները, որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը։ Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևորբարոյական արժեքները՝ տրված Աստծո կողմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով, ուսուցումներով։ Կոնկրետ բարոյական արժեքները, դրանք բացարձակ արժեքներ են, որոնք կապված են բարու և չարի հետ։ Դրանք ձևավավորվում են վաղ տարիքից և ազդում անհատի վրա, ուստի սովորաբար փոխանցվում են նաև տոհմածառի միջոցով։ Յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում ապրել բարոյական արժեքների շրջանակի համաձայն, որպեսզի այդ որոշումն ընդունվի ազատ և անկախ։

Բարոյական արժեքներն այն վարքագիծն են, որ մարդուն ապահովում է կյանքի զգացողությամբ, որով նա ձգտում է կատարելագործել իր մարդկային որակներն ու արժանապատվությունը, ուստի որոշ արժեքների կամ այլ արժեքների կից կյանք վարելը անհատական և ազատ որոշում է։ Արժեքները գոյակցում են անհատների մեջ և կարող են ներքին բախումներ առաջանալ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրին տրված կարևորությունը, քանի որ յուրաքանչյուր մարդ ունի կարևորության տարբեր կարգ։

Բարոյական արժեքներ են – Սեր, ընկերություն, շնորհակալություն, հարգանք, բարություն, առատաձեռնություն, խոնարհություն, ազնվություն, արդարադատություն, քաջություն, ինքնատիրապետում, մարդկային, հոգևոր, գեղագիտական, գործիքային,

մշակութային, նյութական, անձնական, կրոնական, սոցիալական և այլն: Եվ այս արժեքներն ըստ հանգամանքների և իրավիճակի կարող են փոխել իրենց դասակարգումը:

Երեխաների և մեծերի համար հոգևոր–բարոյական արժեքների հետևորդ լինելու նշանները տարբեր չեն, դրանք բոլորի համար էլ նույնն են:

Ազգային արժեք

Մարդկային կյանքը ղեկավարվում է տարբեր չափանիշներով՝ արդարի, բարու, գեղեցիկի, գթասրտության, գնահատանքի, նվիրվածությամբ և հայրենիքի հանդեպ ունեցած սիրո չափանիշներով: Այս հասկացությունները չեն ծնվել առանց պատճառի ու նշանակության: Նրանք տրվել են մարդուն, որպեսզի վերջինս այդ հասկացությունների շնորհիվ կարողանա ճանաչել ինքն իրեն: Անհատի դաստիարակության կարևոր հանգրվանը դպրոցն է, որը մեր պատմության բոլոր ժամանակներում առանձնացել է հոգեկերտվածք ձևավորելու և միտքը կրթելու ազգային և հոգևոր միջոցներով: Քրիստոնեական արժեքների սերմնացան այս օջախում է երեխային քարոզվել, որ հայի հայրենիքը երկու թև ունի՝ նյութական և հոգևոր՝ երկիրն ու եկեղեցին: Երկիր, որը նախնառաջ մեր նախնիների սրբազան ավանդն է, աստվածապարգև գանձ, հանուն որի մեր նախնիները չեն խնայել իրենց կյանքը: Այսօրվա դպրոցականը վաղվա քաղաքացին է, հետևաբար նրա բարոյական գիտակցության մակարդակը որոշում է պետության քաղաքական, տնտեսական, սոցիալական և ռազմավարական բնույթը: Այն իրականացվում է դաստիարակության ընթացքում արժեհամակարգի միջոցով:

Ազգային արժեքների համակարգում իրենց ուրույն տեղն ունեն մեր նախնիների կերտած և պաշտամունքի արժանացած խաչքարերը: Դրանց հետ միասին նաև հին ձեռագրերը, մագաղաթներն ու գրքերը, որպես ոգեղեն հարստություն, որոնք պատկանում են յուրաքանչյուր հայի: Առանձնահատուկ խորհրդանիշներից է ծիրանը կամ «հայկական միրգը», որը մեր երկրի ինքնատիպ այցեքարտն է: Հայաստանը նաև ցորենի հայրենիքն է: Եվ այս ճշմարտությունն ապացուցել է ռուս մեծ գիտնական, գենետիկ բուսաբան, աշխարհագրագետ Նիկոլայ Վավիլովը: Ակադեմիկոսը, որը 65 երկրներ ընդգրկող

գիտարշավներ է ղեկավարել, պարզել է մշակովի բույսերի առաջացման 7 կենտրոններ: Այդ 7 կենտրոններից մեկը Հայաստանն է՝ որպես ցորենի հայրենիք: 10 Հայկական լեռնաշխարհն անհիշելի ժամանակներից հայտնի է որպես գորգագործության բնօրրան և կենտրոն: Եվ ոչ միայն գորգագործությունը, այլև կիրառական արվեստի բազմաթիվ ճյուղեր հազարամյակներ շարունակ ուղեկցել են հայ ժողովրդին: Հայկական մշակույթի ամենաճանաչելի խորհրդանիշը երկգագաթ Արարատ լեռան պատկերն է, այն ամենուր է՝ ազգային ու պետական խոհրդանիշ, նրա շուրջն է միավորված ողջ հայությունը:

Այլ ազգերի կողմից ընդունված արժեքները կոչվում են համամարդկային արժեքներ: Օրինակ՝ Կոմիտասի, Ա.Խաչատրյանի երաժշտությունները, Մ.Սարյանի, Հ.Այվազովսկու նկարները, Շ.Ազնավուրի և այլոց գործեր, որոնք ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեքներ են: Յուրաքանչյուր ազգի արժեքներ ամբողջացնելով ձևավորվում է տվյալ ընդհանրության ազգային դիմագիծը և դառնում հիմնարար արժեք: Ազգային հիմնարար արժեքներն են՝ ազգի ծագումնաբանությունը, ազգը՝ որպես հավաքական ամբողջություն, հայրենիքը՝ որպես ազգի կենսատարածք, հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայրենիք, միասնական մշակույթը, պետականությունը և հասարակական համերաշխության սկզբունքները՝ ազատության և արդարության վերաբերյալ պատկերացումներ: Ազգային արժեքներից կարելի է խոսել անթիվ ու անհամար օրինակներ նշելով, բայց առավել կարևորը նոր սերնդի դաստիարակությունն է ազգային արժեհամակարգով: Այդ համակարգի հիմքը պետք է ունենա ամեն հայ մանուկ. իբրև իդեալ ունենա մեր պատմության մեծերին՝ սկսած Հայկ Նահապետից մինչև Արցախյան ազատամարտի հերոսները: Գերխնդիրը պետք է լինի աշխարհով մեկ սփռված հայության ազգապահպանումը: Անցյալում և այսօր ունեցած արժեքների ճանաչողությունը մեզ կարող է բերել ազգային արժեհամակարգի գիտակցմանն ու գնահատմանը:

Հոգևոր արժեքներ

Հայ իրականության մեջ ազգային և հոգևոր արժեքներն անբաժանելի են: Դարերի ընթացքում մեր ազգային և հոգևոր արժեքները միահյուսվել են պահելով և՛

տարբերությունը, և՛ նմանությունը: Մեկը հավատն առ Աստծուց է սկսում, մյուսը՝ սեփական ժողովրդին նվիրվածությունից:

Ազգային, համամարդկային և հոգևոր արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և բազմաթիվ այլ որակներ՝ աստիճանաբար ձևավորվելով որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: Ազգային դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներն իր մեջ չամփոփած հայը չի կարող լինել իր ազգի լիարժեք անդամ: Հայ դպրոցի, առհասարակ հայերի դաստիարակության կարևորագույն խնդիրն է՝ ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը: Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք է ներառի նաև համամարդկային արժեքներ:

Յուրաքանչյուր հերթական սերունդ յուրացնում է գաղափարների այն համակարգը, որն արդեն գոյություն ունի և նրան տրվում է դաստիարակության, մշակույթի, ավանդույթների և կրոնական քարոզչության միջոցով: Օրինակ՝ քրիստոնեությունն իր կազմավորման ընթացքում կլանել է հնագույն և ժամանակակից կրոնների բազմաթիվ տարրեր, զարգացման ընթացքում ձուլվել են շատ փիլիսոփայական հայեցակարգեր՝ փորձելով հարմարվել հասարակական փոփոխություններին:

Ցանկացած ժողովրդի կազմավորման հիմքում դրվում է հավատը, լեզուն, ինքնուրույն մշակույթը և անկախ պետականության գաղափարները: Սրանք դրվել են նաև հայոց քրիստոնեական ազգային արժեհամակարգի ձևավորման հիմքում՝ որպես հասարակության գործողությունները պայմանավորող նպատակներ: (Տես գծապատկեր)



Դպրոցականների ազգային մտածողությունը խթանելու նպատակով պետք է սովորողներին հանձնարարել լրացուցիչ նյութեր հավաքել օրինակ, հայդուկների, ազատամարտիկների կյանքի, գործունեության վերաբերյալ: Այս ընթացքում սովորողները կհարստացնեն իրենց գիտելիքները տվյալ նյութի շուրջ, նաև կսովորեն ինքնուրույն օգտվել այլ աղբյուրներից, զատել տեղեկույթի կարևորն ու երկրորդականը, հանգել ինքնուրույն եզրահանգումների, ձևավորել սեփական դիրքորոշումը: Դպրոցականների շրջանում ազգային մտածողության ձևավորման և խթանման համար կարևոր է անդրադառնալ ինքնաճանաչողության հարցերին: Ինքնությունը բազմաթիվ անհայտներով մի կառույց է՝ պարուրված խորհրդանշաններով, տարատեսակ իրապատումներով, տեսլականներով ու առասպելներով, որոնք ժամանակի ընթացքում ստանում են տարբեր բացատրություններ: Այս առումով միշտ էլ առաջանում է ինքնության (ինքնաճանաչողության) պատմական ձևերի իմաստավորման, ավանդվածի մեկնաբանության և ազգային ինքնության տարրերի արդիականացման անհրաժեշտություն:

Ինքնաճանաչողությունը պարտադիր ենթադրում է երկխոսություն անցյալի հետ, որի ժամանակ անցյալը պետք է դառնա ներկայի մաս, ներկայի անցյալ, որովհետև ինքնության ցանկացած հարացույց անպատկերացնելի է առանց պատմական շերտի: Սակայն մեզանում կարծես թե բացակայում է անցյալի հետ բովանդակային դիսկուրսը:

Մեր անցյալի պատմամշակութային ժառանգությունը գերազանցապես պահվում է ազգային գրադարաններում ու մատենադարաններում, հիմնականում՝ այլոց ցուցադրելու համար։ Անցյալը բացակայում է ներկայի մեջ։ Մեզանում գերիշխում է ազգային արժեքների նկատմամբ զգացմունքային ու ձևական մոտեցումը։ Իսկ արժեքները եթե միայն պահպանվում են մատենադարաններում ու թանգարաններում, ապա ոչ միայն կորցնում են իրենց գործառութային նշանակությունը, այլև դրանց բացակայության հետևանքով մարդկանց հոգեկանում ստեղծվում են դատարկ տարածություններ, որոնք լցվում են օտարածին ցածրաճաշակ թափոններով։ Եթե բավարարվում ենք միայն այդ արժեքների ֆիզիկական գոյությունը փաստելով, ապա դրանք դադարում են արժեքներ լինելուց։ Այլ խոսքով՝ արժեքներն ոչ միայն պետք է պահպանել, այլև դրանք յուրացնելով-ներքնայնացնելով՝ անընդհատ հարստացնել ու արդիականացնել։

Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի է թվում։ Ուստի անհրաժեշտ է կրթական համակարգից սկսած ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները ,որոնք անհրաժեշտ են արժանապատիվ քաղաքացուն։ 21-րդ դարում մեծ տարածում գտած գլոբալացման ճանապարհին կորսվում են ազգային արժեքներն ու դիմագիծը, և ամեն ինչ տանում է գլոբալիզացիայի, այդ պատճառով հիմա առավել քան երբևէ պետք է անընդհատ աշակերտների հետ զրուցել ազգային արժեքների դերի և կարևորության մասին, անընդհատ հիշեցնել, թե ովքեր են իրենց նախնիները, ինչ փառավոր անցյալ են ունեցել և որ մենք պարզապես իրավունք չունենք կորցնելու այն, ինչ մեր պապերն իրենց արյան գնով պահել ու փոխանցել են մեզ։

Դպրոցական դասագրքերում, հանրակրթական և առարկայական չափորոշիչներում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել ազգային արժեհամակագի ձևավորման հարցերին, ավելացնել հայագիտական առարկաներին հատկացվող ժամաքանակները, աշակերտների հետ հաճախակի կազմակրեպել արշավներ դեպի պատմամշակութային հնավայրեր, որպեսզի նրանք տեսնեն ու ճանաչեն հայրենիքի ամեն անկյունը, նախագծային աշխատանք հանձնարարել, որի ընթացքում սովորողները ինքնուրույն կհետազոտեն ու կբացահայտեն իրենց ծննդվայրի պատմությանը վերաբորող փաստեր։

Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին ։ Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները։ Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին։ Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների և համամարդկային նվաճումների հետ։ Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին։ Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը։ Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ։ Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել։ Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին։ Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը։ Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները։ Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից։ Դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում։ Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է։

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը, անկասկած, շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար։ Խոսքը Հայոց պատմության դասերին ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին է։ Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան։ Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին։ Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ ունեցող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի։ Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում։

Հիմա հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունն ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայ ժողովրդի և հայոց պետականության գոյությունը։ Հիմա նոր Ավարայրի ու նոր Սարդարապատի կարիքը կա, հիմա առավել քան երբևե պետք է համախմբվել մեկ միասնական բռունց դառնալ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը։

Հայ ժողովրդին բաժին է հասել դժվար ու պայքարով լի ճակատագիր, բայց նա միշտ պայքարել է ու իր զավակների արյան գնով ամրագրել իր գոյության իրավունքը։ Սա էլ կանցնի, առավել քան համոզված եմ, որ հաղթանակը մերն է լինելու, քանզի մեր գործն արդար է, մենք պայքարում ենք մեր հայրենիքի յուրաքանչյուր թիզի համար, այլ ոչ թե

զավթում օտարինը, ուստի պետք է համախմբվել, մի կողմ թողնել բոլոր տեսակի տարաձայնությունները և ձեռնամուխ լինել ազգանվեր գործին՝ հայրենիքի փրկությանը:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ, որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Փայլուն սերունդ է մեծանում՝ համարձակ, պահանջատեր ու նախանձախնդիր, մեր խնդիրն է նպաստել, ուղղորդել, որ նրանք հայրենասեր ու հայրենաճանաչ լինեն, իրենք են մեր ապագան ու մեր երկիրը շենացնողները:

Գրականության ցանկ

1. «Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր» ԵՊՀ, Երևան 2016թ.
2. Լ.Թորգոմյան «Մանկավարժական արժեբանության հիմունքներ» ուս. ձեռնարկ, Երևան 2011թ
3. Լ.Ա.Հակոբյան «Հայաստանը արժեքների համաշխարհային հետազոտության արդյունքներում» 2014թ., թիվ 6
4. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002
5. Ա. Վ., Մուդրիիկ, Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում, Երևան 1986:
6. «Հայոց ինքնության հիմնահարցեր» Սեյրան Զաքարյան, Երևան, 2020 թ
7. «Գիրք պատմության ուսուցման Ինչու՞, ինչպե՞ս» ,Պարադիգմա կրթական հիմնադրամ, Երևան 2020 թ.